

ուս պահիր, որ քո բարի ճանապարհի մէջ լինելու արգելք են լինում: Աստուծու որդի որ դառնաս, չես կորչիր, որովհետեւ երկնքի ու երկրի Տէրը քո հայրդ կլինի:

Հասնու շատ անգամ, մեզ անբաղդութիւնս փորձանք պատահած ժամանակը, սաստիկ ցաւած ու կոտորած սրտով ասումենք, անքննելի անհասկանալի են Աստուծու ճանապարհները: Լաց լինող մայրը իւր հիւանդ տղայի անկողնի մօտ դեռ ևս չէ հասկանում, թէ այդպիսի դեռ ևս անմեղ ու մաքուր հոգուն այդչափ չարչարանք քաշելն ի՞նչի համար էր: Բայց այս ցաւն ևս մի շար պատահմունքից չէր, երկնաւոր Տէրոջ ձեռի գործն էր: Մի օր այս և այսպիսի մութ ու դժուարին հանելուկները զարմանալի կերպով կարող էին, կը յայտնվին. մի օր, արդէն այս աշխարհիս մէջն է եղել, թէ միայն միւս աշխարհի մէջ, ամենայն բան կատարեալ կերպով պետքէ հասկանանք: Ահա՛ — թո՛ւ ի՞նչ էր պէտքէ յայտնի լինի՛ւն:

Թարգմ.

Գ. Ե. Ա.

Գ. Հիւանդաբէր Բոյնի Բնագնդիւն — օրի դէպքն ինչից է:

Արհեստական կերպով օդը մաքրելը հին ժամանակներում ևս գործ էին ածում վարակիչ հիւանդութիւնների դէմ իբրեւ նախապաշտպանօղական միջոց, որովհետեւ այն ժամանակ քիմիական օդամաքրիչ նիւթերի հետ ծանօթ չէին, այդ պատճառով վարակումից պաշտպանուելու համար քաղաքների հրապարակներում մեծ խարոյկներ էին այրում: XIV դարում երբ Աւ ժանտախտը ահագին վնասներ էր անում ամենայն տեղ զարհուրանք և երկիւղ առաջացնելով, Փարիզի բժշկական մասնաբաժնի անդամները — որ այն ժամանակ մեծ ձայն ունէին, — առաջարկեցին ամենայն տեղ խարոյկներ այրել խաղողի որթերից, կանաչ դաբնուց և այլ թարմ ծառերից: Այդ տեսակ միջոցներ գործ դնելով ի հարկէ մարդիկ ենթադրում էին, որ օդի մէջ հիւանդաբեր նիւթեր կան, որոնք հասարակական առողջութեան օգտի համար պիտի բնաջնջուէին: Այժմ ևս մենք միևնոյն հայեցողութեան ենք հետևում, միայն այն զանազանութեամբ, որ թիմուկու, նեխուկու, և փտելու գործողութիւնների վերայ արած փորձերը և հետազոտութիւնները, դեզինֆեկցիայի գիտութեան հիմնաւոր գիտնական դրութիւն տուին, որ առաջուայ ժամանակներում բոլորովին չուներ: Փորձառական գործերը նմանապէս կանոնաւոր տեղեկութիւն տուին դեզինֆեկցիայի նշանակութեանը իբրեւ սանիտարական միջոց և հասարակական առողջապահութեան գործիք: Այժմ հետզհետեւ աւելի կարծիք է տարածվում որ դեզինֆեկցիայն բոլոր վարակիչ հիւանդութիւնների տարածման դէմ հանրական եղանակ չէ, և թէ նորա գործադրութիւնը կարող է օգուտ բերել այն ժամանակ միայն, երբ վնասակար նիւթերը մաքրութեամբ լիովին չեն հեռացւում:

վում որ դեղինֆեկցիայն բոլոր վարակիչ հիւանդութիւնների տարածման դէմ հանրական եղանակ չէ, և թէ նորա գործադրութիւնը կարող է օգուտ բերել այն ժամանակ միայն, երբ փնտաւար նիւթերը մաքրութեամբ լիովին չեն հեռացում:

Մաքրութիւնն ամենալաւ դեղինֆեկցիական միջոցներից մէկն է, դորանից աւելի շատ օգուտ կարելի է ստանալ համաճարակումը դադարեցնելու համար, քան թէ այժմ՝ ևս շատ գործադրելի անուշահոտ կամ գարշահոտ խոտեղէններ ծխելուց, որոնց մասին հաստատ կարելի է ասել, որ նոքա համարեա չեն փոքրացնում վարակիչ նիւթերի երկարատևութիւնը: Բնակարանների դեղինֆեկցիայի համար աւելի յուսալի միջոցներն են քլորը և ծծմբաթթուատը (хлоръ, сернистая кислота,) որովհետև սոքա գործարանաւոր նիւթերը բնաջինջ են անում: Մարդիկ գժրադաբար բաւականանում էին սենեակներում փոքր ինչ քլորի կիր զնելով (хлорная известь) կամ փոքր ինչ ծծումբ ալրելով: Սենեակում ծծմբաթթուատի կամ քլորի հոտ միայն տարածելով դեղինֆեկցիայն նպատակին հասնել չէ կարող: Կէտք չէ մոռանալ որ հիւանդաբեր նիւթերը բնաջինջ անելու համար հարկաւոր է դեղինֆեկցիական նիւթերը որոշեալ քանակութեամբ գործ զնել, միւսնոյն ժամանակ դեղինֆեկցիան ինչպէս և հողմահարութիւնը (вентиляция) պէտքէ կանոնաւոր կերպով գործ դրուի թէ քանակութեան և թէ որակութեան կողմանէ: Օրինաւոր դեղինֆեկցիայի համար հարկաւորէ քանի մի ֆունտ ծծումբ իւրաքանչիւր սենեակին, (սենեակի իւրաքանչիւր խորանարդ սաժենի տարածութեան 24 զօլօտնիկ) և կամ երկար ժամանակ քլորով ծխել: Միւսնոյն գործողութեան ժամանակ զոները և լուսամուտները պէտքէ ծածկել, և ծխելուց յետոյ սենեակն երկար ժամանակ հողմահարել (проветривать): Իհարկէ հիւանդներին պէտքէ առժամանակ ազդափոխել ուրիշ սենեակներ մինչև դեղինֆեկցիայի վերջանալը:

Վարակուած սենեակը ծծմբի ծխով հետեւեալ կերպով են մաքրում: Բոլոր վարակուած նիւթերն՝ օրինակ շորեղէններն, շապկեղէններն և այլն փռում են պարանների վերայ վարակուած սենեակում, և յետոյ վերցնում են մի որ և իցէ ամանով կամ մինչև անգամ աղիւսով վառուած ածուխ, ձգում են այս վերջինի վերայ մի քանի կտոր ծծումբ սենեակի մեծութեանն համեմատ, միւսնոյն ժամանակ զոները և լուսամուտները ծածկում են և բաց չեն անում ամենաքիչը մօտ 24 ժամ. ծծումբի ծուխը (ծծմբաթթուն) լցւում է սենեակի մէջ և իւր սաստիկ ուտիչ յատկութիւններով ջնջում է վարակիչ նիւթերը: 24 ժամից յետոյ բաց են անում զոները և պատուհաններն և կանոնաւոր հողմահարում են բնակարանը. սորանից յետոյ միայն կարելի է բնակարան մտնել, որովհետև ծծումբի հոտն առողջութեան և շնչառութեան համար վտանգաւոր է:

Փոքր ինչ դժուարին է վարակուած սենեակը քլորով մաքրելն. քլորն հետեւեալ կերպով են ծխում. սենեակը պատրաստում են այնպէս՝ ինչպէս

և ծծումբ ծխելու ժամանակ, սենեակի մէջտեղը տեղաւորում են կրակարանով կրակ, որի վերայ դնում են կաւից կամ յախճապակուց (ֆայենսից) շինած բաժակ, բաժակի մէջ լցնում են մարդանցի կրկնաթթուատ (перекись марганца), խոհանոցի աղ (поваренная соль) և փոքր ինչ ջրով լուծուած ծծմբաթթու (сёрная кислота)։ Սենեակը 12—24 ժամ ամենայն կողմից փակում են և վերջը դռներն և պատուհանները բաց անելով հողմահարում են ինչպէս և ծծումբ ծխելուց յետոյ, Հողմահարելուց առաջ պէտք չէ սենեակ մտնել, թէ դռները և թէ պատուհանները պէտքէ դուրսից բաց անել, որովհետեւ քլորի գազն աւելի վնասակար է քան թէ ծծումբ այրելուց առաջացած գազը։ Այն սենեակներում ուր ծծումբ կամ քլոր են ծխում, պէտք չէ թողնել երկաթեայ, պղնձեայ և կամ մետաղեայ իրեր, որովհետեւ դրա փշանում, ժանգոտում, և գունաթափում են։ Իսկ ինչ վերաբերում է ստանալիք քլորային գազի քանակութեան, պէտքէ 7—8 մարդ ունեցող բնակարանի համար վերցնել մարդանցի թթուատ և աղ, իւրաքանչիւրից $\frac{1}{8}$ ֆունտ, ծծմբաթթուատ մօտ $\frac{1}{4}$ ֆունտ $\frac{1}{4}$ ֆունտ ջրով։ Ծծմբով ծխելն աւելի նպատակայարմար հտեւանքներ է տալիս քան թէ քլորով ծխելը։

Սենեակի օդը մաքրելու համար գործ են ածում նոյնպէս մարդանցաթթուատային աղ (марганцовокислое кали, կարմիր աղ), նա շուտով է լուծվում ջրի մէջ մօթ կարմիր գոյնով, աւելի թեթեւ լուծուածը կարմիր կամ վարդագոյն է տալիս։ Անգլինֆէկցիայի համար պատրաստում են կարմիր կամ վարդագոյն խոռուորդը, լցնում են ամանների մէջ և դնում են սենեակի անկիւններում և կամ այդ հեղուկով սրսկում կամ սփռում են սենեակը։ Սենեակի օդը մաքրում են նմանանապէս քացախ ծխելով։

Եփած ջուրը և կամ տաք ջրի գոլորշին ևս վարակիչ թոյների դէմ գործ են դրում իրրեւ լաւ միջոց, Անգղիայում, Բերլինում և Վէննայում և ուրիշ շատ տեղերում այդ միջոցը շատ յաջողակ է գործածուած անասունների շրթեկառքները մաքրելու համար։ Մի և նոյնը կարելի է յարմարացնել և հիւանդների սենեակներին։ Խոնաւ տաքութիւնը լաւ օգտւածքիչ միջոց է, մէկ ուր ընդդիմանում է փոշու առաջանալուն և երկրորդ որ տաքութիւնը փոքր ի շատեւ ոչնչացնում է հիւանդաբեր թոյները, շատ օգուտ է հիւանդների սենեակների պատերը եփուած ջրով լուանալ և կամ տաք գոլորշու հոսանքով ցօղել։ Հիւանդների բնակարաններին նա մանաւանդ հիւանդանոցների ծելիւ, իւրաքանչիւր տարի հարկաւոր է քերել և նորից ծելիւ, հաւանական է որ վարակիչ նիւթերը կարող են ծելի մէջ թափանցուել և երկար ժամանակ իւրեանց վարակիչ գորութիւնը պահպանել։

Իսկ ինչ որ վերաբերում է դէպի վարակիչ կաշողական հիւանդութիւններն ունեցած անհատական տրամադրութեանը թուլանալուն, ընթերցողին

յայտնի է որ մենք այս մասին յիշատակութիւն ենք արած ծաղկահատութեան մասին խօսելուս. (տես Արարատ. յունիս):

Բ. Վարակիչ միազմատիկական հիւանդութիւններէ զէ՛մ նախապաշարպահական միջոցներ:

Առողջապահական միջոցները, որոնք գործ են դրուում միազմատիկական հիւանդութիւնները սահմանափակելու և կամ որքան կարելի է նախապաշարպանելու համար, առաջանում են նոյն իսկ նոցա ծագման և տարածման եղանակներից: Հասարակութեան սիրելի խօլերային կանոնները, որոնք իբր թէ առանձին անհատներին պաշտպանում են վարակումից, մենք այստեղ պատմելու չենք. յարմար բնակարանների, մաքուր օդ, լաւ ջուր և այլն. հասարակական առողջապահութիւնը պահանջում է ամենայն ժամանակ և ամենայն տեղ և ոչ թէ միայն խօլերային և տիֆային համաճարակումների առաջն առնելու համար: Երբ թշնամին խօլերայի կամ տիֆի կերպարանքով ներս է մտնում, երբ սկսում է քաղաքներ և գիւղեր աւերել, մենք զարթնում ենք մեր սովորական քնաբութիւնից, յանկարծ նկատում ենք որ բոլորովին խրվել ենք և ապրում ենք աղբի մէջ, սկսում ենք մաքրուել տարիներով հաւաքուած կեղտոտութիւններից, բնաջնջում ենք բոլորն աջ և ձախ, ածում ենք կարբօլեան թթուաւ և ծծմբեկաթ, միով բանիւ միջոցներ ենք գործ դնում: ուշադրութիւն չդարձնելով թէ որքան նպատակայարմար են գոքա. համաճարակումը վերջանում է, մենք հանգստանում ենք և փոքր առ փոքր կրկին մտնում ենք աղբի մէջ, առաջուայ պէս բոլորի շուրջ անտարբեր ենք նայում և այս կերպով ճանապարհ ենք պատրաստում ապագայ նոր համաճարակումների համար, որոնք առաջանալով կրկին զարթնցնում են մեզ քնից, ստիպում են միևնոյն միջոցները գործ դնել, ուշադրութիւն չդարձնելով թէ որքան նպատակայարմար են գոքա: Եւ յիշուի որ մինչև վերջին ժամանակ խօլերայի կամ տիֆի դէմ գործադրուած միջոցները քիչ էին համապատասխանում համաճարակման տարածման և ծագման հանգամանքներին: Նորա առաջանում էին աւելի բնակիչների համաճարակումից առաջացած երկիւղից, կոպիտ ինքնապաշտպանութեան զգացումից, քան թէ զիտնական սկզբբունքներից, և դորա համար այդ միջոցներն անյուսալի էին, միմեանց հակառակ, և աւելի բնակիչներին հանգստացնելու և համոզելու համար, որ իբր թէ թշնամու դէմ մի բան է գործ դրում, քան թէ իսկապէս հիւանդութիւնն հեռացնելու համար:

Թէ զիտնական և թէ հասարակական առողջապահութեան կէտից հետեւեալ միջոցները պիտի գործ դնել վարակիչ միազմատիկական հիւանդութիւնների դէմ:

ա. Պէտքէ հիւանդաբեր թոյնը, ուր նա գտնուում կամ ենթադրուում է, բնաջնջ անել. — թունաջինջ դէզինֆէկցիայ (дезинфекция)

բ. Պէտքէ աշխատել հիւանդաբեր թոյնի մուտքի և տարածման առաջն առնել. — Կարանտիններ կամ առողջներին վարակուած տեղերից հեռացնել (эвакуация):

գ. Պէտքէ բոլոր ոյժը գործադրել տեղական և գլխաւորապէս դետնի պայմանները փոխելու համար, որպէս զի ներս բերուած հիւանդաբեր թոյնը վերանորոգուելու պայմաններ չգտնի — խոնաւածուծ խողովակներ և ջրանցքներ: (дренажъ и канализация):

... Դէզինֆէկցիայ:

Դէզինֆէկցիայն իբրև նախապաշտպանողական միջոց խօլերայի և տիֆի դէմ 60 - երորդ թուականներում խիստ տարածուեցաւ և գործնական յարմարութիւն ստացաւ: Մի և նոյն ժամանակ դէզինֆէկցիայի պաշտպանների ոյժերն ուղղուած էին, և մինչև անգամ գլխաւորապէս, հիւանդների կղկղանքները և արտաքնոցների բովանդակութիւնն անփնաս անելու համար, որովհետև նոցա մեջ կարծում էին թէ կգտնեն, եթէ ոչ իսկական վարակիչ թոյն, գոնեայ մի որ և իցէ փնասակար նիւթ, Կղկղանքների դէզինֆէկցիայն առաջարկումէին թէ նշանաւոր բժշկներ, թէ գիտնականների ժողովներ և այլն. և քաղաքային վարչութիւններից շատերն ստիպողական էին համարում համաճարակուծի մօտենալու կամ երեւալու ժամանակ, Այս կերպով բաւական մեծ գումար էր մտնում արտաքնոցների բովանդակութիւնն անփնաս անելու համար և հասարակութիւնը սովորեցաւ իւր բոլոր յոյսը դնել դիզինֆէկցիայի վերայ: Միանգամայն հետևանքներին փոքր ինչ քննողական կերպով նայելով երեւցաւ, որ նոքա չկարողացան համապատասխանել ունեցած յոյսերին, և դէզինֆէկցիայն համաճարակուծների թէ երկարատեւութիւնը և թէ չափն ու տարածումը չփոխեց, ուրեմն և ահագին զուամրններն, մեծ աշխատութիւններն ի զուր կորան: Այդ պատճառով դէզինֆէկցիային վերաբերեալ հայեցուածքները փոխուեցան և միջազգային առողջադիտական ժողովը Վէնայում 1874 թ. հարկաւոր համարեց յայտնել որ մինչև այժմ մենք չենք իմանում ոչ մի եղանակ և ոչ մի ճանապարհ դէզինֆէկցիայի միջոցով խօլերային թոյնը ջնջելու կամ անփնաս անելու: Այդ անմխիթար, բայց անկեղծ խոստովանութեամբ մահառիթմ վճիռ տուին կղկղանքների դէզինֆէկցիային, իբրև խօլերայի դէմ աղատիչ միջոց, որ մինչև այդ ժամանակ գործ էր ածուած և պէտքէ ասել որ կոպիտ փորձառական կերպով, առանց գիտնական սկզբունքների առաջնորդութեան: Ինչ և իցէ այդ միջոցների վերայ գործ դրուած գումարները զուր չանցան, որովհետև դէզինֆէկցիայի պատմութիւնը լաւ դաս եղաւ մեզ համոզելու, որ հիւանդաբեր թոյնի ջնջման սկզբունքը, որ ինքն ըստ ինքեան ճշմարիտ է, այն ժամանակ կարօղ է կանոնաւոր գործնական յարմարութիւն ունենալ, երբ մենք կարողանանք իմանալ որ ինչ տեղ են գտնուած հիւանդաբեր թոյններն և ինչ յատկութիւններ ունին նոքա: Մինչև այդ հարցերը չվճռուին, արտաքնոցների և այլն . . . դէզինֆէկցիայն

աւելի փնաս կարող է առաջացնել քան թէ օգուտ. այն պատճառով՝ որ նորա կատարելու դիւրութիւնը (այսինքն այն ձևով ինչպէս սովորաբար կատարուած է) հասարակութիւնը նախադասուած է միւս միջոցներից. ապա ուրեմն և աւելի իսկական եղանակներն երկրորդական է ընդունում: Բնակիչներն հետզհետէ համոզուելով, կարծում են որ բոլոր փնասն առաջանում է արտաքնոցների բովանդակութիւնից, և բաւականանում են նոցա մէջ փոքր ինչ ծծմբերկաթ և կամ կարբօլեան թթւաւոր լցնելով. նորա կարծես չեն կամենում իմանալ թէ արդեօք այդ միջոցով անհետանում է հիւանդութեան թոյլը թէ ոչ. և չեն աշխատում համաճարակովից ազատ ժամանակներում նպատակայարմար միջոցներ գործ դնել նոցա կրկնուելու դէմ: Ընթերցողը պէտք չէ մոռանայ որ այս բոլոր առաջներս վերաբերում են գէղինֆէկցիային իբրև միակ միջոց խօլերայի կամ տիֆի դէմ. իսկ այն տեղերում, ուր գործ է դրւում գէղինֆէկցիային, օղը, յատակները և պատերը մաքուր պահելու համար, ի հարկէ ունի փոքր և ժամանակաւոր նշանակութիւն. որովհետեւ հաստատուած է որ մեր արտաքնոցների գարշահոտ գոլորշիները կարելի է բաւականաչափ թուլացնել զանազան գէղինֆէկցիական միջոցներ գործ դնելով*): Բայց միւս կողմից աւելի նպատակայարմար է որքան կարելի է շուտով հեռացնել բնակարանների մօտից ամեն մի կեղտոտութիւն, որոնք կարող են օղը ապականել, քան թէ հաւաքել առաջուց նոցա մի տեղ և յետոյ ահագին ծախսեր անել և այդ կեղտոտութիւնները բնաջինջ անել: Միանգամայն կղկղանքների գէղինֆէկցիային բուրդովին աւելորդ կլինէր, եթէ օղը և գետինը վարակող անկանոն արտաքնոցների տեղ մեր քաղաքները մատակարարուած լինէին կատարեալ ջրանցաւոր արտաքնոցներով, եթէ բոլոր կեղտոտութիւններն հեռացուէին մարդկային բնակարաններից, այնպէս որ գետինը մաքուր մնար, այն ժամանակ աւելորդ կլինէր վախենալ տիֆային կամ խօլերային հիւանդների կըղկղանքներից:

Բ. Հիւանդաբէլը լայնի հաւաքի դէմ գործառնալ միջոցներ:

Միազմատիկական հիւանդութիւնները կաշողական (փոխադրական) համարօղները, իբրև նախապաշտպանողական միջոց, հիւանդներին առողջներից հեռացնելուն և նոցա համար առանձին հիւանդանոցներ շինելուն մեծ

(*) Աղբիւսների եւ արտաքնոցների բովանդակութիւնը գէղինֆէկցիայ անելու համար, վերցնում են ծծմբերկաթ (желѣзный купорос, — գեղին բիւրեղ) լուծում են մի վեղրօ կամ կուժ ջրի մէջ եւ թափում են փողը, իսկ յետոյ առանձին խառնում են ջրի մէջ քլորի կիր (хлорная известь) եւ քանի մի ժամանակից յետոյ թափում են միեւնոյն փողը: Մարդու մի օրուայ կղկղանքի քանակութեան համար հարկաւոր է վերցնել ծծմբերկաթ $3\frac{1}{2}$ — $6\frac{1}{2}$ զօլօտնիկ եւ քլորի կիր $3\frac{1}{2}$ զօլօտնիկ, Այդ խառնուրդի ազդեցութիւնից դարձահոտութիւնը թուլանում եւ նեխումը դադարում է:

Նշանակութիւն են տալիս: Բայց ընթերցողին յայտնի է, որ գիտութեան այժմեան հայեացքին համաձայն շատերը խօլերայի տիֆի և ժանտախտի կալոյդական յատկութիւնները չեն ընդունում և այդ հիւան վերայ բոլորովին աւելորդ են համարում խօլերային հիւանդներին ստիպմամբ հեռացնել իւրեանց բնակարաններից, և կամ ուղարկել առանձին խօլերային հիւանդանոցներ. ոչ թէ աւելորդ այլ մինչև անգամ կարծում են որ այդ միջոցը խիստ է և բոլորովին օգուտ չի բերում հասարակական առողջութեանը:

Հիւանդանոցներում պէտք է տեղաւորել միայն այն խօլերային հիւանդներին, որոնք ուրիշ հիւանդութիւնների պատճառով էլ ընտանեկան վատ հանգամանքներից ստիպուած դիմումեն հիւանդանոց, և որովհետև խօլերան կալոյդական չէ. ուրեմն առանձին հիւանդանոց շինելն ևս աւելորդ է. ուստի և խօլերային հիւանդներին կարելի է տեղաւորել ընդհանուր հիւանդանոցների առանձին սենեակներում կամ պալիլիօններում, առանց միւս հիւանդներին վնասելու: Պէտք է ասել որ ոչ թէ միայն խօլերայի յատկութիւնից առաջացած տեսական կշռադատութիւններն հակառակ են հիւանդների առանձնանալուն, այլ և թէ Հնդկաստանում և թէ Եւրոպայում արած դիտողութիւններն հաստատումեն որ այդ միջոցը չէ կարելի ընդունել իբրև նախապաշտպանողական խօլերայի դէմ: Խօլերային հիւանդներին հիւանդանոցների առանձին սենեակներում պիտի տեղաւորել, որովհետև ընդհանուր սենեակներում նոքա վատ տպաւորութիւն են անում միւս հիւանդների վերայ:

Առողջների հեռանալը վարակուած տներից, փողոցներից կամ քաղաքներից որոնք վարակման բոյն են դարձել, աւելի ապահով միջոց է քան թէ հիւանդներին առանձնացնելը: Եթէ ընդունում ենք որ հիւանդը չէ առաջացնում պատրաստ խօլերային թոյն, և չէ կարող վարակել շուրջ եղողներին, այլ վարակման աղբիւրը նոյն իսկ տեղը — գետինն է, ուրեմն առողջների հեռանալն այդ տեսակ տներից կամ քաղաքներից աւելի նպատակայարմար, բայց ոչ ընդհանուր նախապաշտպանողական միջոց է, որովհետև ունեւոր դասը միայն կարող է գործ դնել այդ միջոցը. իսկ չքաւոր ժողովուրդը կամայ ակամայ պէտք է մնայ իւր բնակած տեղերում: Սակայն կարի մեծ դէպքերում հասարակական կառավարութիւնները պէտք է որ օգնեն չքաւորներին, բնակիչներին պէտքէ դուրս հանեն սաստիկ վարակուած կենդրոններից, և տեղափոխեն նոցա ժամանակաւոր բնակարաններում կամ հասարակական շինութիւններում:

Բայց որքան և իցէ առողջների հեռանալն վարակուած կենդրոններից հազիւ թէ կարող է մի ժամանակ ընդհանուր նախապաշտպանողական միջոց դառնալ. հեռանալ կարող են քանի մի անհատներ կամ քանի մի բնակիչների խմբեր, որոնք սորա համար յաջող պայմաններ ունին. այսինքն խօլերայից խուսափելն միայն այն ժամանակ ունի նշանակութիւն, երբ կարելի լինի փախչել ոչ թէ միայն խօլերայից խնայուած այլ և այն-

պիսի տեղ, ուր խօլերային թոյնը վերանորոգելու պայմաններ չունի — այդ տեսակ տեղեր ամենայն տեղ չկան, ամենքին մատչելի չեն: Բացի դորանից շատ քիչերը կարող են իրանց բնակութիւնն ամենայն դեպքում թողնել, քաղաքացիների մեծամասնութիւնը և համարեա բոլոր գիւղական բնակիչներն ստիպուած կլինին իւրեանց բնակարաններում բնդդիմանալ համաճարակման բոլոր հարուածներին: Եւ վերջապէս խօլերայից խուսափելու իրրեւ ընդհանուր առողջապահական միջոց, որին պիտի դիմեն բնակիչներից շատերն համաճարակումի յաճախ կրկնողութեան ժամանակ, երկրի տնտեսական գրութեանը սաստիկ փնասում է: որովհետեւ տեղափոխուելու ծախքերը և մարդիկների յարաբերութիւնների և գործերի դադարումից առաջացած փնասները մեծ գումարների են հասնում: Պետէնհօֆերի հաշուից երեւում է որ երբ 1875 թ. Պերուի քաղաքի բնակիչների $\frac{1}{4}$ մասը խօլերայից փախան Լիբանանի լեռները, ընդհանուր փնասը մօտաւորապէս հասնում էր մինչև 800000 բուրլու: — Ենթադրելով որ իւրաքանչիւր փախտական երկու ամսից աւելի պիտի չմնար սարերում: Պետէնհօֆեր ասում է քաղաքների համար այդ տեսակ միջոցների հետեանքները պատերազմներից աւելի աւերիչ են: Արեւմն պէտքէ ասել որ թէպէտ տեսականապէս առաջարկում է, իրրեւ նախապաշտպանողական միջոց, խօլերային տեղերը թողնել, բայց հաղիւ թէ նա յարմարութիւն գտնի քաղաքակրթութեւն Եւրոպայի բազմաբնակ տեղութիւնների և քաղաքների մէջ:

Ինչո՞հին ժամանակներում աշխատումէին որ խօլերային և ժանախտային թոյնները միտեղից միւս տեղ չտարածուին, և այդ պատճառով մարդիկների յարաբերութիւնները բոլորովին դադարեցնումէին կարանտինների միջոցով, որ շինումէին թէ ցամաքի թէ գետերի վերայ և թէ նաւահանգիստ ունեցող քաղաքներում: Ի հարկէ անկասկածելի է որ մարդկային յարաբերութեան զանազան ձևերը միակ միջոց են ներկայացնում միազմատիկական հիւանդութիւնների տարածման համար, ուրեմն շատ տրամաբանօրէն է որ աշխատում էին նորանից ազատուելու համար բոլոր յարաբերութիւնները դադարեցնել:

Կարանտինների շինութեան սկզբնապատճառը ժանտախտն էր: Առաջուայ ճանապարհների հաղորդակցութիւնները և մարդկային յարաբերութիւնները շատ զարգացած չլինելով, յիշաւի երբեմն յաջողումէր առանձին տեղերը խիստ առանձնացնելով վարակումից ազատել: Իսկ այժմ տեղական և միջազգային յարաբերութիւնների յառաջադիմութեան պատճառով, կարանտինական միջոցների գործադրութիւնն հետզհետէ սկսաւ դժուարանալ և վերջին ժամանակներում կարանտինի հարցն աւելի բարդացաւ, որովհետեւ հետզհետէ աւելի և աւելի սկսան համոզուել որ խօլերան և մինչև անգամ միւս միազմատիկական հիւանդութիւնները կաշողական (փոխադրական) չեն, և յիշաւի. եթէ խօլերային թոյնը գետնի մէջն է վերանորոգում, և եթէ միանգամ օդի մէջ ելնելով կարօղ է կաշել ամեն մի առարկայի, ուրեմն և նորա տարածումը զանազան ճանապարհներով կարօղ է պատահել. ուստի

և առողջապահական խնամակալութիւնը սաստիկ դժուարանում է, կարանտինները կորցնում են իրանց նշանակութիւնը և բացի դորանից եթէ վարակիչ նիւթը երկարատե յատկութիւն ունի և քանի մի որոշեալ պայմանների ժամանակ այդ յատկութիւնը պահում է քանի մի ամիս կամ տարի, ուրեմն ի՞նչ միջոց պէտք է գործածենք տակաւին ազատ երկիրներն այդ թոյնից փրկելու համար: Համաճարակումը մի նշանաւոր տեղ վաղուց վերջացել է, նաւերը թողնում են նաւահանդիստները կանոնաւոր վկայականներով, լաւ առողջագիտական դրութեամբ, անարգել ընդունուածն միւս քաղաքների նաւահանդիստներում: Իսկ յանկարծ առանց մի տեղեկութեան, պայուսակի մէջ մի շոր կամ մի այլ առարկայ է գտնուում, որի վերայ առջուց կպած և լաւ պահպանուած է եղել վարակիչ նիւթը, պայուսակը կարանտինում էի արգելում, որովհետեւ նորա մասին ոչ մի կասկած չկայ, ստացւում է հասցէով, բացւում է և բոլորովին անակնկալ հիւանդութիւն է տարածում և մահ պատճառում: Այդ տեսակ օրինակներ շատ կան բժշկական գրականութեան մէջ, թէ ժանտախտի թէ դեղին տենդի և թէ խօլերայի վերաբերմամբ: Այդ բոլորն հաստատում են որ վարակիչ թոյնը կարօղ է տարածուել կարանտինների խիստ հոգացողութեան ժամանակ անգամ:

Ուրեմն հին ժամանակներում եթէ յաջողւում էր կարանտինների միջոցով քաղաքները և կամ երկիրները պաշտպանել ժանտախտի և կամ խօլերայի համաճարակումներից, այդ պիտի բացատրել նորանով, որ այս յաջողութիւնը կախուած էր վաճառականական և մարդկային ընդհանուր յարաբերութիւնների սահմանափակութիւնից: Իսկ այժմ կարանտինների խնդիրն հետզհետեւ դժուարացաւ, նախ և առաջ հարկաւոր համարուեցաւ բոլորովին հրաժարուիլ ցամաքային կարանտիններից, որոնք ոչ միայն անօգուտ այլ մինչև անգամ վնասակար դուրս եկան (որովհետեւ կարանտինի պահպանների ներկայութիւնն աւելի նպաստում է քան թէ ընդդիմանում էր վարակիչ թոյնի տարածման) և վերջին ժամանակներում խնդիր էր բարձրացած թէ արդեօք կարօղ են ծովային կարանտինները որքան և իցէ իրանց նշանակութիւնը կատարել, ի հարկէ օտարոտի է թուում թէ այն երկիրներն, ուր ցամաքային հաղորդակցութիւնն անարգել շարունակւում է (որի ընդհատելը տնտեսական շահերին աւելի կարօղ է վնասել քան թէ ինքն համաճարակումը) այն տեղերում կարելի լինի ծովի կողմից վարակիչ թոյնների դէմ միջոցներ գործ դնել: Հասկանալի է որ թէ մարդիկների և թէ ապրանքների համար ցամաքի կողմից հազար ու մէկ ճանապարհներ կան, որով կարօղ են անարգել ներս մտնել, որով և վարակիչ նիւթերը ներս բերել: Բացի դորանից դժուար կարելի է հաւատալ թէ նոյն իսկ ամենախիստ կարանտիններում անգամ թունաւոր նիւթերը (օրինակ ապրանքի հակերի մէջ և այլն) արգելւում եւ բնաջինջ են լինում: Այս կերպով նաւահանդիստ ունեցող քաղաքների կարանտինական միջոցներն հիւանդութեան դէմ բոլորովին նշանակութիւն չունին, քանի որ հիւանդութիւնը ցամա-

քային կողմով կարող է ներս բերուել, իսկ նորա այն տեղերում միայն յարմար են, ուր վարակիչ նիւթը համարեա թէ ծովային ճանապարհով է միայն ներս բերվում: Ինչպէս են կղզիները, Խօլերային վերաբերեալ կարանտինական սիստիմայի հետեանքներն այնքան արդիւնաւոր չեն, որ կարելի լինէր շարունակել այդ թանգ միջոցները. ուստի և աւելի օգտաւէտ կլինէր եթէ միջերկրականի ծովեզերքներում տակաւին գոյութիւն ունեցող կարանտինական ձևերը խափանուէին և նոցա տեղը շինուէին նոր պահպանողական կամ քննողական կայարաններ, Վէնայի 1874 թ. առողջադիտական ժողովի առաջարկութեանն համաձայն: Չվարակուած տեղերից եկած բոլոր նաւերն անմիջապէս կարող են նաւահանգիստ ընդունուիլ և ազատ մնալ առողջապահական տեսչութիւնից, Իսկ եթէ նաւերը վարակուած տեղերից են լինում և Խօլերայով հիւանդներ են ունենում, այն ժամանակ պէտք է հիւանդներին տեղաւորել առանձին հիւանդանոցներում: Նաւ բոլոր իւր բովանդակութեամբ, նոյնպէս և ճանապարհորդների և նաւի ծառայողների շորերը պատշաճաւոր կերպով մաքրել և դէզինֆեկցիական միջոցներ գործ դնել, և յետոյ ազատ թողնել թէ նաւին և թէ ճանապարհորդներին: Թէպէտ, ինչպէս ընթերցողին յայտնի է, դէզինֆեկցիան Խօլերայի թոյնի դէմ իբրեւ յստկանիչ միջոց պէտք չէ ընդունել, այլ միայն իբրեւ մաքրութիւն պահպանելու նպատակայարմար եղանակ, բայց կարելի է ասել որ վերոյիշեալ առողջապահական կանոնները ճշգրտութեամբ կատարելով, վարակումը շտարածելու համար մեր կարողութեան չափ աշխատած կլինինք: Միւսնոյն ժամանակ ճանապարհորդների բոլոր անյարմարութիւնները և վաճառականական ճնշողութիւնը, որոնք լինում են սովորական կարանտինների պատճառով, բաւական կհեռացուին, Ինքն ըստ ինքեան կարանտինը Վէնայի ժողովի կարծիքով շատ խիստ պիտի չլինի և քննողական կարանտինը պէտք է շարունակել 1—7 օրից ոչ աւելի, իսկ ամենահարկաւոր դէպքերում 10 օր:

Գ Տ Գ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՐՆԵՐԸ:

(« Երարատ », նոյեմբեր),

Քրիստոսի ծննդից յետոյ մինչև հինգերորդ դարի սկիզբն Հայերը չունէին իւրեանց տառերը և ըստ ամենայն հաւանականութեան ոչ մի գրաւոր գրականութիւն. թէև դժուար է երեւկայել, թէ ինչպէս կարող էր այդպիսի ընդարձակ տէրութիւնը մնալ երկար դարեր առանց իւր սեփական լեզուն գործածելու գրութեան մէջ, մինչդեռ նորա մերձակայ բոլոր ազգերն ի վաղուց ունէին իւրեանց գրերը: Սակայն կերելի թէ այսպէս էր Հայաստանում, որովհետև մինչև այժմն ոչ մի յիշատակարան չէ հակառակում այս